# ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆ

## (ծննդյան 75-ամյակի առթիվ)

Սովետական պատմական գրության լավագույն ներկայացուցիչներից է Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը, որը 30-ական թվականների կեսերից ծավալած իր գիտական, մանկավարժական և գիտակազմակերպչական բեղմնավոր գործունեությամբ անուրանալի ծառայություն է մատուցել հայ ժողովրդի և ՍՍՀՄ պատմության շատ ու շատ պրոբլեմների բարձրացման և ուսումնասիրման գործին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մ. Ներսիսյանը ծնվել է 1910 թ. Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, նա 1927 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Արդեն ուսանողական տարիներին դրսևորվում են ապագա նշանավոր պատմաբանի գիտահետազոտական նախասիրությունների շրջանակները ու ինքնուրույն ընդունակությունները: 1931 թ. համալսարանը, իսկ 1936 թ. ասպիրանտուրան ավարտելուց հետո նա հինգ տասնամյակ անընդմեջ մեծ շանսիությամբ և անմնացորդ նվիրումով, գրչով ու խոսքով իր ծանրակշիռ լուման է ներդրել հարազատ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցերի մշակման մեջ, հիմնարար ուսումնասիրություններով դարձել է սովետահայ պատմագիտական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկը:

Այն է Մ. Գ. Ներսիսյանի պատմագիտական հետաքրքրասիրությունների ոլորտը. հեղափոխական և ազատագրական շարժումների, հասարակական մտքի, հայ ժողովրդի ազատագրական պայքարի, հայ-ռուս և հայ-կովկասյան հարաբերությունների, արևմտահայության սոցիալ-քաղաքական կացության և հայ ժողովրդի նոր շրջանի պատմության այլ հարցեր ու դրանց աղերսվող խնդիրներ գտնվել են գիտնականի ուշադրության կենտրոնում՝ նրան մղելով գիտական նորանոր որոնումների:

Արդեն 30-ական թվականներին երիտասարդ պատմաբանը գիտական (և ոչ միայն գիտական) հասարակայնության հանաչումը արժանացավ մեծ ու փոքր ծավալի մի շարք գործերով, որոնք նվիրված էին Մայիսյան ապստամբությանը, Բաքվի կոմունային, Ստեփան Շահումյանին, 1918—1920 թթ. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերլուծությանը և Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը: Հանրապետության 30-ական թվականների հասարակական-քաղաքական և գիտական կյանքում աչքի ընկնող երևույթ էր «Առաջին մասնյական հեղափոխական շարժումները Հայաստանում» փաստաթղթերի ժողովածուի հրատարակումը (1932 թ.), որ Կ. Ղազարյանի և 22-ամյա Մ. Ներսիսյանի քրտաջան աշխատանքի արդյունքն էր: Հրապարակ հանված փաստաթղթերը, մերժելով Հայաստանում հեղափոխության «ներմուծման» մասին դաշնակցականների և Արևմուտքի նրանց գրչակիցների «դոկտրինան», ցույց էին տալիս, որ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը երկրում պիրոզ

սոցիալ-տնտեսական ծանր կացությամբ պայմանավորված նայ աշխատավոր զանգվածների 1917—1920 թթ. մղած հեղափոխական պայքարի փայլուն ապացույցն էր, պատմական օրինաչափ մի իրողություն: Այս նույն տարիներին Մ. Ներսիսյանը ավարտեց «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում» ուշագրավ աշխատությունը. որը լույս տեսավ 1940 թ.: Ինքնատիպ մի ուսումնասիրություն էր դա. որի հեղինակը, լինելով առաջինը, կարևոր խոսք էր ասում Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում նարոդնիկության՝ որպես հասարակական-քաղաքական հոսանքի առաջացման սոցիալ-տնտեսական պայմանների մասին, ցույց էր տալիս Անդրկովկասի մտավորականության մասնակցությունը 1860—1880 թթ. Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական-նարոդնիկական շարժմանը: Միաժամանակ գրքում մեկնաբանված էր. կարևոր մի հարց՝ Անդրկովկասում նարոդնիկական շարժման առանձնահատուկ կողքը. այն, որ, համընկնելով ազգային-ազատագրական շարժման աշխուժացման ժամանակաշրջանին, Անդրկովկասում նարոդնիկական միտքը որոշակիորեն կրում էր նաև նրա ազդեցությունը:

Մ. Ներսիսյանը լուրջ վաստակ ունի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության պրոբլեմների մշակման գործում: Սովետահայ պատմագրության մեջ կարևորագույն այս թեմայի բարձրացման և ուսումնասիրման առաջնեկներից էր նա, հեղինակը առաջին ծավալուն մենագրության, որը լույս տեսավ 1955 թ. «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» վերտառությամբ: Տասնամյակների լռությունից հետո առաջին անգամ գիտական լիարժեք խոսք էր ասվում թուրքական սուլթանի ծանր լծի տակ տառապած մեր ժողովրդի դժնդակ վիճակի և նրա հերոսական ու անհավասար պայքարի մասին: Մենագրությունը վկայում է նրա հեղինակի կատարած հարատև և բազմապլան աշխատանքը: Արխիվային և այլ կարգի հարուստ նյութը այն հիմքն ու ատաղձն են, որի վրա կառուցված է գրքի լայնածավալ շարադրանքը՝ շաղախված խոր վերլուծություններով ու հետևություններով:

1850—1870 թվականները արևմտահայ ազգային-ազատագրական շարժման զարթոնքի տարիներ էին, և հենց այդ զարթոնքով պայմանավորվեցին Հայկական հարցի ձևավորման նախադրյալները, մի հարց, որը շուտով միջազգային հանաչում ստաց: Մենագրության մեջ լուսաբանված են արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի սոցիալ-տնտեսական արմատները, սուլթանական Թուրքիայի ազգային և սոցիալական քաղաքականության հակաժողովրդական և ասիմիլատորական բնույթը, այսինքն՝ բացահայտված են այն օբյեկտիվ ներդապատճառները, որոնք արևմտահայ գյուղացիական զանգվածներին մղում էին ազատագրական մարտերի՝ թուրքական բռնահիրական լուծը թոթափելու համար: Այս հարցի համակողմանի քննարկումը զուգակցված է թուրքական և նրանց ձայնակից օտար այն հեղինակների կեղծարարություններին, որոնք փորձում են անտեսել հայ և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային և ազգային նախադրյալները, ժխտել նրա օբյեկտիվ պատճառների առկայությունը թուրքական «դրախտում»: Մ. Ներսիսյանը, կարևորություն տալով ազատագրական պայքարի գաղափարաբանությանը, ցույց է տվել, որ այն արտահայտում էր արևմտահայ գյուղացիության ձգտումներն ու իղձերը: Հենց այս աղերսով նա լուրջ ուշադրություն է դարձրել Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Գ. Սրվանձտյանի և զեմոկրատական մտահայեցության մյուս գործիչների գաղափարների գնահատմանը:

Մ. Ներսիսյանի մենագրության գիտական նշանակությունը չի սպառվում սոսկ վերը նշված պրոբլեմների լուսաբանմամբ. առանց վարանումի կարելի է ասել, որ հետպատերազմյան շրջանում առաջինը բարձրացնելով նշված խնդիրները, հեղինակը իր այդ աշխատությամբ մի զգալի չափով խթանեց արևմտահայ ազատագրական շարժումների լայնահուն մշակմանը, որը 60—70-ական թվականներին մեզանում, իրոք, աչքի ընկնող ձեռքբերումներ ունեցավ:

Հայ ազատագրական պայքարի ուսումնասիրման հարցերը շարունակ հանդիսացել են Ներսիսյանի մտահոգության առարկան: Նշված մենագրությունից զատ՝ նա արժեքավոր հոդվածներ է գրել 1862 թ. Զեյթունի ապստամբության, հայկական կոտորածների, ազգային հերոս Անդրանիկի գործունեության բնութագրման վերաբերյալ: Սակայն այդ բոլորի մեջ, հիրավի, առանձնանում է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուն, որը իրականացվեց նրա նախաձեռնությամբ և գիտա-խմբագրական ղեկավարության ներքո: Ժողովածուն ունեցավ երկու հրատարակություն՝ 1966 և 1982 թթ.: Երկրորդ հրատարակությունը պայմանավորված էր ոչ միայն գրքի նկատմամբ եղած մեծ պահանջարկով, այլև մի շարք լրացումներ կատարելու իստիվ անհրաժեշտությամբ: Կազմված լինելով Մոսկվայի և Երևանի արխիվներից հայտնաբերված փաստաթղթերի, ինչպես նաև մեզանում և ար-

տանանանում հրատարակված նյութերի հիման վրա, ժողովածուն փաստերի անողոք լեզվով ստարգանքի սյունին է գամում արևմտահայության համատարած ջարդի կազմակերպողներին և կատարողներին՝ բուրքական կառավարողներին, ինչպես նաև նրանց արևմտյան հովանավորներին: Ժողովածուն ունի միջազգային կարևորություն, քանի որ սուլթանի և երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը, ցավոք սրտի, իր հետևորդները գտավ ոչ միայն հանձինս գերմանական ֆաշիստների, այլև արդի նոր գաղութարարների: Ժողովածուի փաստաթղթերը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ Հայկական հարցը, որը Աբդուլ Համիդն ու երիտթուրքերը «լուծեցին» հայերի ցեղասպանությամբ, հանգում էր արևմտահայերի սոցիալական և ազգային ազատագրության խնդրին: Ժողովածուում ընդգրկված նյութերը միաժամանակ ապացուցում են, որ բուրքական սուրը չէր խնայում ոչ մեծերին, ոչ փոքրերին, տարբերություն չէր դնում սոցիալական խավերի միջև, անխնա կոտորում էր բոլոր հայերին: Ժողովածուի առաջին մասն ընդգրկում է հայկական ջարդերը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, իսկ երկրորդ մասը՝ 1908—1918 թվականներին: Ժողովածուում, միաժամանակ, տեղ են գտել բովանդակությամբ հարուստ նյութեր, որոնք մերկացնում են բուրքական ագրեսորների նվաճողական նպատակները, Բոսֆորից մինչև Այթայ Օսմանյան կայսրություն ստեղծելու նրանց ծրագրերը, ինչպես նաև արևմտյան տերությունների բանսարկությունները: Աչքի ընկնող տեղ են բռնում նաև այն փաստաթղթերը, որոնք պատմում են հայերի հերոսական դիմադրության, նրանց մղած անհավասար մարտերի մասին, արտահայտում են համաշխարհային առաջադեմ հասարակայնության վերաբերմունքը դեպի հայերի ցեղասպանությունը, նրա ցասումնալից բողոքը բուրքական ջարդարարների դեմ: Ջմխտելով նշված հարցի շուրջը ստեղծված գրականության նշանակությունը, պետք է ընդգծել, սակայն, որ Մ. Ներսիսյանի գլխավորությամբ կազմված այս ժողովածուն գիտական արժեքով և մանավանդ արդիական-քաղաքական կարևորությամբ բերեց իրեն հավասարը չունի:

Մ. Ներսիսյանի ուսումնասիրությունների շարքում նշանակալից տեղ է բռնում հայ-ռուսական հարաբերությունների և կապերի թեմատիկան: Վերջինս ընդգրկում է հարցերի մի ամբողջ շղթա՝ Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, հայ-ռուս զինակցությունը, 1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները, դեկաբրիստները Հայաստանում և այլն: Մ. Ներսիսյանի՝ այս պրոբլեմներին նվիրած յուրաքանչյուր աշխատություն նոր խոսք է պատմագիտության մեջ՝ ասված փաստական նյութի համակողմանի քննությամբ, լայն շրջահայաց և ընդգրկում ունեցող պատմաբանի բանիմաց գրչով: Նախ ընդգծենք, որ նշված բոլոր թեմաների բարձրացման առաջնության դափնին պատկանում է նրան: Այդ աշխատություններից սոսկ մի քանիսի բնութագրումն իսկ լիովի բավական է՝ ճիշտ պատկերացում կազմելու այն մեծ ավանդի մասին, որ նա ներդրել է պատմական գիտության այդ բնագավառը:

Տակավին 1944 թ. Մ. Ներսիսյանը լույս ընծայեց «Ա. Վ. Սուվորովը և ռուս-հայ հարաբերությունները 1770—1790-ական թթ.» աշխատությունը: Հետագայում այն որոշ լրացումներով ու շտկումներով լույս տեսավ նաև ռուսերեն: Այս գրքում, ի շարս այլ հարցերի, հեղինակը սովետահայ պատմագրության մեջ առաջինն էր, որ ուշադրություն դարձրեց նաև դրիմանայերին վերաբնակեցնելու ռուսական կառավարության նպատակների բացահայտմանը, հստակ պատասխան տալով այն հարցին, թե ինչ հաշիվներով էր թելադրվում եկատերինա 2-րդի կառավարության այդ ձեռնարկումը:

Հայ-ռուսական պատմական կապերը և ռազմա-քաղաքական առնչությունները տարբեր դիտակետերից և նորովի մոտեցմամբ լուսաբանություն գտան Մ. Ներսիսյանի «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» հոդվածների ժողովածուում (երկու հատորից: 1956 և 1961 թթ., ռուսերեն): Մ. Ներսիսյանը քանիցս անդրադարձել է դեկաբրիստները Հայաստանում պրոբլեմին, նախ 1958 թ. հրատարակելով «Դեկաբրիստները Հայաստանում» գիրքը և 1975 թ. նույն վերնագիրը կրող մենագրության առաջին հատորը՝ ռուսերեն: Այդ աշխատության մեջ նա հարուստ և տարասեռ նյութեր է դրել շրջանառության մեջ, դրանց օգնությամբ պարզել շատ հարցեր՝ Կովկաս աքսորված դեկաբրիստների ցուցակը, նրանց մասնակցությունը XIX դարի քառասնական թվականների վերջերին տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին, դեկաբրիստների կապը հայ գործիչների հետ, դեկաբրիստների համակրանքն ու մարդասիրական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ պատմական մի ժամանակաշրջանում, երբ օրվա պրակտիկ հարց և գործնական լուծում պահանջող խնդիր էր դառնում նրա ազատագրումը թուրք-պարսկական լծից:

Մեր երկրի ժողովուրդների պատմական բարեկամության և 1812 թ. Հայրենական պատերազմի պատմության հարցերի մշակման առումով կարևոր արժեք ունի «1812 թվականի Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» աշխատությունը (1965 թ., ռուսերեն): Հայրենական պատերազմին Կովկասի ժողովուրդների ունեցած մասնակցության լուսաբանմանը զուգընթաց հեղինակը մերկացրել է լուրջական և պարսկական, ինչպես նաև Արևմուտքի տերությունների պլանները, ցույց տվել կովկասյան ժողովուրդների համար կործանարար այդ պլանների հետևանքները և դրանց ոչնչացման պատմական օբյեկտիվ պայմանները:

Մ. Ներսիսյան հետազոտող-պատմաբանին բնորոշ են մտքի խորությունը, ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդը. փաստական հարուստ նյութի ընդգրկումը և նրա ետևում պատմական իրադարձությունների տրամաբանական կապակցության բացահայտումը: Նրա յուրաքանչյուր աշխատություն աչքի է ընկնում փաստական առատ և նոր նյութի ընդգրկմամբ, սակայն նա երբեք դրանց դերին ու էմպիրիկ շարադրողը չէ, այլ հենախույզ մեկնաբանը, որը տարաբնույթ նյութերի միջոցով ընթերցողին գիտելիք է մատուցում, նաև՝ ընդլայնում նրա հայրենասիրական դաստիարակության գործին:

Մ. Ներսիսյանը գիտական գործունեությունը միշտ համատեղել է մանկավարժական աշխատանքի հետ: Նա երկար տարիներ ՍՍՀՄ և հայ ժողովրդի պատմության դասընթացներ է կարդացել հանրապետության բուհերում, ղեկավարել համալսարանի հայ ժողովրդի պատմության սեմինարը: Նրա գիտական ղեկավարության ներքո անել են բազմաթիվ պատմաբաններ:

Մ. Ներսիսյանը գիտության հայտնի կազմակերպիչներից է մեր հանրապետությունում: Նա եղել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ, Երևանի պետական համալսարանի ռեկտոր: Նրա գիտակազմակերպչական ձիրքի և ունակությունների վկայությունն էր իր իսկ նախաձեռնությամբ 1958 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադրումը, որի գլխավոր խմբագիրն է նա պարբերականի ստեղծման սկզբից մինչև այսօր: Միաժամանակ, Մ.Ներսիսյանը գիտամանկավարժական աշխատանքը զուգակցել է հասարակական լայն գործունեության հետ. նա քանիցս ընտրվել է ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, հանդիսանում է «ՍՍՀՄ—Բուլղարիա» ընկերության Հայկական բաժանմունքի նախագահը: Գիտական և հասարակական հանձնված գործիչ, Հայրենական պատերազմի մասնակից Մ. Ներսիսյանի ծառայությունները բարձր են գնահատվել կուսակցության և կառավարության կողմից. նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով և մի շարք մեդալներով:

Իր 75-ամյակը բոլորած և գիտական պատկառելի վաստակի տեր Մ. Ներսիսյանը այսօր էլ աշխատում է իրեն հատուկ եռանդով ու ավյունով՝ տոգորված ստեղծագործական նոր մտահղացումներով և ծրագրերով: Վաստակաշատ գիտնականին մաղթենք քաջառողջություն և այդ ծրագրերի հաջող իրագործում:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սիրելի հոբելյար.

*«Լրաբեր» ամսագրի խմբագրական կոլեգիան և աշխատակիցները սրտանց ողջունում են անանավոր պատմաբանիդ Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ, ցանկանում են Ձեզ քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:*

«Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի
խմբագրական կոլեգիա, խմբագրության աշխատակիցներ